

II. Գ. ՈՍԿԵՐՁՅԱՆ,

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՐՐԻԳՆԵՐԻ ՎԱՐՔԱԴԻՄԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ,
ՀԱՐԹԱՎԱՅՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Արարատյան հարթավայրի պայմաններում եգիպտացորենը կարևոր կենդանի կուլտուրա է: Բարենպաստ պայմանները, որոնց շնորհիվ եգիպտացորենը մշակվում է ինչպես դարձանը, այնպես էլ աշնանը, մեծացնում են նրա ժողովրդատնտեսական նշանակությունը: Արարատյան հարթավայրի կուտնտեսությունների համար: Այդ տեսակետից կարևոր հարց է դառնում տեղի պայմաններում եգիպտացորենի աշնային հիբրիդների ստացումը, որոնք կառաջացնեն կանաչ զանգվածի, կաթնամսային հասունացման հասած կողբերի և հասուն հատիկի տաք բերք:

1955 թվականից մենք աշխատանք ենք կատարել տեղական պայմաններին հարմարված եգիպտացորենի հիբրիդների ստացման ուղղությամբ: 1955 թվականին հիբրիդացման միջոցով ստացված եգիպտացորենի սորտագծային և կրկնակի միջգծային հիբրիդներն ուսումնասիրել ենք 1956 թվականին Հայկական ՍՍՐ Գյուղատնտեսություն մինիստրության Երկրագործություն գիտահետազոտական ինստիտուտի էջմիածնի էքսպերիմենտայն բազայում: Ստանդարտ հանդիսացել է Վ.Ի.՝ 42 կրկնակի միջգծային հիբրիդը՝ Լրացուցիչ կերպով ուսումնասիրվել են Վ.Ի.՝ 30, Ոստինյակի 676 հիբրիդները, Կրանոդարսկայա 149 հիբրիդային պոպուլյացիան և Ստերլինգ սորտը: Փորձը զրկել է վեց կրկնողությամբ: Երեք կրկնողությունների բերքը հավաքվել է կողբերի կաթնամսային հասունացման շրջանում, իսկ մնացածներին՝ լինի հասունացման շրջանում:

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1-ում բերված տվյալները, էջմիածնի պայմաններում (28×29) և (44×38) փոշոտիչների միջոցով ստացված հիբրիդները վեգետացիայի տևողությամբ քիչ են տարբերվում միմյանցից: Վեգետացիայի տևողության հատկանիշով նրանց մաքսիմում տարբերվելուը կազմել է 6 օր, բոլոր օրում բոլոր հիբրիդներն էլ հանդիսացել են համեմատաբար վաղահաս ձեռք: Վեգետացիայի ընդհանուր տևողությունը նրանց մոտ կազմել է 89—95 օր, բոլոր օրում ստանդարտները եղել է 90 օր: Ամենատաշահատենքը եղել են Ոստինյակի 676 հիբրիդը և Կրանոդարսկայա 149 հիբրիդային պոպուլյացիան: Արարատյան հարթավայրում, որտեղ բարենպաստ պայմաններ կան եգիպտացորենի աճեցողության և դադարացման պրոցեսների արագ տվարտման համար, վեգետացիայի տևողության աչքային կրճատումը միանգամայն օրինաչափ երևույթ է: Այն իր հերթին անցրադարձել է բույսերի վարժամսության վրա: Ուսումնասիրվող բոլոր ձեռքի մոտ վերերկրյա տերևների թիվը եղել է 11—14, բոլոր օրում էջմիածնի պայմաններում ստացված հիբրիդների մոտ հիմնականում 11—12 է: Բույսերի բարձրության և վերին կողբի բարձրության հատկանիշներով հիբրիդների միջև եղած տարբերությունը նույնպես պայմանավորված է վեգետացիայի տևողությամբ:

Հիրքիզների սորտերի մեքանի ջուլանիշները

Հիրքիզը կամ սորտը	Վեցկետա- դիայի տեղ- դրությունը (օր)	Բույսերի բարձրու- թյունը (սմ)	Վերին կող- մերի բարձ- րությունը (սմ)	Տերմին- ների թիվը
Վիժ 42	90	191,6	69,5	13
Խարկովսկայա սպիտակ առամենակ $\times$ (28 $\times$ 29)	93	183,3	56,1	12
Գրուշնակայա $\times$ (28 $\times$ 29)	95	184,2	50,0	11
(ԿՁԲ. 2 $\times$ 44) $\times$ (28 $\times$ 29)	93	179,9	50,8	11
(18 $\times$ 44) $\times$ (28 $\times$ 29)	91	188,7	57,5	12
(ԿՁԲ. 127 $\times$ 44) $\times$ (28 $\times$ 29)	91	183,2	55,3	12
(Հիթ. 10 $\times$ 44) $\times$ (28 $\times$ 29)	89	177,4	55,5	12
(Հիթ. 36 $\times$ 44) $\times$ (28 $\times$ 29)	91	178,9	53,8	11
(44 $\times$ 38) $\times$ (28 $\times$ 29)	89	184,5	55,5	12
Միննևստա 13 $\times$ (44 $\times$ 38)	90	195,5	55,6	12
Էլմիտնի կարծր սպիտակ $\times$ (44 $\times$ 38) (109 $\times$ 113) $\times$ (44 $\times$ 38)	90	187,6	56,0	12
(75 $\times$ 113) $\times$ (44 $\times$ 38)	90	184,0	58,9	12
(40 $\times$ 41) $\times$ (44 $\times$ 38)	90	196,2	66,8	12
(40 $\times$ 41) $\times$ (44 $\times$ 38)	92	188,1	61,1	12
(40 $\times$ 43) $\times$ (44 $\times$ 38)	90	183,3	70,2	13
(Բ. 907 $\times$ Գ. 350) $\times$ (44 $\times$ 38)	91	179,9	51,9	11
(40 $\times$ ԿՁԲ. 127) $\times$ (44 $\times$ 38)	90	201,2	73,0	13
Սաերլինդ	94	217,8	75,5	13
Վիժ 60	96	216,9	86,0	14
Օսեռինսկի 676	94	224,8	84,5	14
Կրասնոդարսկայա 1 19	96	218,8	79,5	13

Կաթնամուծալին հասունացման շրջանում կանաչ դանդաղածի և կողերի բերքը էջմիածնի պայմաններում ստացված հիրքիզների մեծ մասի մոտ ավելի բարձր է, քան ստացվել է Վիժ 42-ի մոտ: Կանաչ դանդաղածի և կաթնամուծալին հասունացման շրջանում կողերի ամենաբարձր բերքը տվել է (40 $\times$ ԿՁԲ. 127) $\times$ (44 $\times$ 38) կոմբինացիայով հիրքիզը (սպիտակ 2): Լավ արդյունք են տվել նաև (Հիթ. 10 $\times$ 44) $\times$ (28 $\times$ 29) և (Հիթ. 36 $\times$ 44) $\times$ (28 $\times$ 29) կոմբինացիայով հիրքիզները: Կրասնոդարսկայա 1 19 հիրքիզալին պոպուլյացիան չնայած բացարձակ բերքով զերտզանցել է ստանդարտին, սակայն առաջադրել է կողերի ավելի արտաքին բերք (2,7¹ օ):

Չոր հատիկի բերքը նույնպես էջմիածնի պայմաններում ստացված հիրքիզների մեծ մասի մոտ ավելի բարձր է եղել Վիժ 42 հիրքիզի բերքից: Համեմատաբար բարձր բերք են տնեցել (44 $\times$ 38) $\times$ (28 $\times$ 29), (ԿՁԲ. 127 $\times$ 44) $\times$ (28 $\times$ 29), (18 $\times$ 44) $\times$ (28 $\times$ 29), (75 $\times$ 113) $\times$ (44 $\times$ 38) և Գրուշնակայա $\times$ (28 $\times$ 29) սորտազմալին ու կրկնակի միջոցալին հիրքիզները: Մեկ հեկտարից ստացված նրանց բերքը եղել է 40 ցինտներ և ավելի (40,22—44,32): Հետաքրքիր է այն, որ քաղաքաթիվամբ մեկի, ամենաբերքառու հիրքիզալին կոմբինացիաները ստացվել են (28 $\times$ 29) փոշտիչի միջոցով:

Սորտազմալին հիրքիզներից լավ արդյունք է տվել Գրուշնակայա $\times$ (28 $\times$ 29) կոմբինացիան, որը կաթնամուծալին հասունացման շրջանում կողերի և չոր հատիկի բերքով զերտզանցում է ստանդարտին համապատասխանորեն 13,6 և 9,2¹ օ:

Հետաքրքիր է այն հանդամանքը, որ Սաերլինդը, Վիժ 60, Օսեռինսկի 676 հիրքիզները և Կրասնոդարսկայա 1 19 հիրքիզալին պոպուլյացիան կանաչ

[illegible][illegible]

2. *Ammonia*

4. Էջմիածնի շրջանի պայմաններում ստացված հիբրիդներից լավագույնները հանդիսացել են՝

ա. $(40 \times \text{KЗР } 127) \times (44 \times 38)$ ։ Այս կոմբինացիայով կրկնակի միջոժարին հիբրիդը նպատակահարմար է մշակել կանաչ զանդվածի և կաթնամսալին հատունացման վիճակում կողերերի բերք ստանալու համար։

բ. (հիբ. 10×44) $\times$ (28×29) ։ Այս կոմբինացիայով հիբրիդը կարելի է մշակել կանաչ զանդվածի և չոր հատիկի բերք ստանալու համար։

Հայկական ՍՍԻՔ Գյուղատնտեսության
Երկրագործության ինստիտուտ

Ստացվել է 20. IX 1960 թ.

С. П. СЕМЕРДЖЯН

ПОВЕДЕНИЕ НЕСКОЛЬКИХ ГИБРИДОВ КУКУРУЗЫ В УСЛОВИЯХ АРАРАТСКОЙ НИЗМЕННОСТИ

Р е з ю м е

В Араратской низменности кукуруза является важнейшей кормовой культурой, поэтому создание новых гибридов, которые дадут хороший урожай зеленой массы в молочно-восковой спелости и зерна, является актуальным вопросом.

Для частичного решения этого вопроса в течение 1955—1956 гг. нами получены и изучены сортолинейные и двойные межлинейные гибриды кукурузы. Результаты изучения дают основание сделать следующие предварительные выводы.

1. Между признаками длины растений, высоты прикрепления верхнего початка, количеством листьев и вегетационным периодом существует определенная взаимосвязь. Чем позднеспелый сорт, тем выше прикреплен верхний початок и на растениях образуется сравнительно больше листьев.

2. Двойные межлинейные гибриды являются самыми урожайными формами кукурузы. Несмотря на это, отдельные сортолинейные гибриды также дают хороший урожай. В наших опытах таковым является гибрид Грушевская $\times$ (28×29) , который по урожаю зеленой массы в молочно-восковой спелости, а также зерна превышает двойной межлинейный гибрид ВИР 42.

3. Некоторые гибриды кукурузы дают хороший результат в стадии молочно-восковой спелости, а другие — в полной спелости. Исходя из этого, целесообразно в каждом хозяйстве возделывать два гибрида: один для получения силосной массы, другой для получения зерна.

4. Из гибридов, полученных в условиях Эчмиадзинского района, лучшими являются:

а. $(40 \times \text{KЗР } 127) \times (44 \times 38)$. Целесообразно возделывать гибрид для получения зеленой массы с початками в стадии молочно-восковой спелости.

б. (Гиб. 10×44) $\times$ (28×29) . Гибрид дает хороший результат как при уборке в стадии молочно-восковой, так и при полной спелости.